



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» հոկտեմբեր 2013թ.

N 169/ՍՔ


ք. Ստեփանակերտ

Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը հաստատելու մասին

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի N167-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջը

հրամայում եմ.

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը՝ համաձայն հավելված 1-ի, հավելված 2-ի, հավելված 3-ի և հավելված 4-ի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հարցաշարերը տեղադրել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք-էջում:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին՝ հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:



Ս. ԱՍՐՅԱՆ